ԱՆՑՈՐԳԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲՔԱՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՅՈՒՇԵՐԻՑ)

Գրեց՝ ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՍԵՒԱՆ

4·

Մի քանի վայրկեան հանդիստ առնելուց յետոյ, տեսարանը նորից ցատկում է մեր վերայ, ինքնաշարժի դրդմբացող գլխին լայն ծալքերով պատռուում ու խորդ ու բորդութիւնների մէջ երերալով — աջից լեռ, ձախից գետ — դնում կուտակւում է երկնքի զով պայծառութեան տակ:

Հովը ուժգին մատերով կառչում է ուսերիս:

Զանգուն այստեղ լուռ է· հոսում է ծնդզանները փակած, որովհետեւ իր փոսը երկնքի մէջ է փորել եւ չունչը վերեւից է առնում: Նաեւ լուռ է՝ մտածում եմ՝ եւ այն պատճառով, որ ամէն մի ձայն այստեղ կոչուած է կորչելու: Կան վայրեր, ուր մթմիայն լռութիւնը կարող է աղաղակել, ուր վայրկեանները համբ են ծառից ընկած բոցավառ մրդերի նման, եւ կեանքը այնքան ներսն է, որ ամէն ինչ բարձրանում է եւ գագաթի վերածւում:

Ինքնաշարժը վազում է խրտչած ձիի պէս: Բլուրի վրայ արածող կովերը բիշ-բիշ նայում են ու փախչում: Զիւնոտ մի գագաթի ետեւ դեղին մի ամպ է թառել, արատի նման:

Դեղերի երկաթէ տաքը պառկել է ոտքիս վրայ, ճնշում է: Անկարելի է շարժուել: Ճանապարհը ծռւում է՝ մի ժայռ ուրիշ ժայռի ետեւից դուրս է պրծում ու գլուխը զարնում է հովին:

Հորիզոնը ալիք է:

Մեզ հետ յամառօրէն ու երկաթէ ոտքերով վազում են հեռադրաթելերը: Անգլիայի հնդկական գիծը ճեղքում է բոլոր տարածութիւնները: Երբեմն, ներկարար մի թռչուն՝ Հայաստանի այդ մահարաջան՝ նստում է թելերի վրայ, մաքրում է կտուցը եւ անհունին հեռագրական նշաններ հաղորդում:

Այստեղ արագութիւնը ոչինչ չի փոխում:

Ամէն ինչ նոյնօրէն խիստ է, անապատականի դէմքի վրայ խռկուած վերջնական մտքի նման:

Օդի մէջ էլ պողպատ եւ սառոյց կայ:

— Ծածկեցէք ձեր կուրծքը· այդ օդի հետ չի կարելի խաղալ:

Ու ընկեր կոմիսարը նայում է աչքերիս մէջ՝ պրպտելով տպաւորութիւններս:

— Հեռաւո՞ր երկիր···

— Այսինքն՝ մեզանից հեռո՞ւ երկիր:

— Զէ,— այդ ռուսական անունները՝ Սուխոյ Ֆանտան, Ելենովկա՝ եւ Հնդկաստանի այդ հեռագրագիծը···

— Երկու կայսերականութիւնների բնական հանդիպում:

— Բնակա՞ն:

— Պատմական փաստ: Միշտ էլ այդպէս եղած չէ՞···

— Հռոմը եւ Պարսկաստանը···

— Այո՛:

— Ռուսաստանը եւ Տաճկաստանը···

— Հէնց ա՛յդպէս:

— Իսկ մենք՞:

— Իսկ մենք ապրել ենք գետնի տակ փորուած ծակերի մէջ, ինչպէս քիչ առաջ տեսաք· նայել ենք, թէ ինչպէս ուրիշները մշակում են մեր ձեռքից խլած հողերը եւ յարմարուել ենք: Ահա ուրիշ մի գիւղ, նայեցէ՛ք···

Ու ճամբայի մօտ կանգնած, ռուս երկու մուժիկներ գլխարկ հանեցին եւ խոնարհուեցին մեր ինքնաշարժի առջեւ: Հեռաւոր ստեպներից եկած փայտաշէն, «հաւի ոտքերի վրայ կանգնած» տիպական ռուս տուներ: Սլաւ այդ «քաղաքակրթութիւնը» իր հետ բերել է ակուսուած դերաններ, քառակուսի պատուհան, բուսմաղէյի վարագոյր եւ բաղեր: Ու այդ մարդիկ, չնայած որ գրեթէ այստեղ են ծնուել, հեռուներից եկած ճամբորդի նայուածքներ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան